

Դժբախտաբար վախցածն ալ կատարուած է: Թէպէտ մահուանը թուականն ու տեղին անծանօթ է, սակայն 1912ին Հռոմ Ս. Մարիամ Եգիպտացի ազգային եկեղեցւոյն հաշիւներուն մէջ նշանակուած գտայ, թէ 1781 Յուլիս 6ին վճարուեր է 12 սկուտ նոյն եկեղեցւոյ հոգաբարձու Տէր Յովհաննէս Այտինեան Վ.ին, «որովհետեւ ասիկայ շատ աշխատեր է գտնելու հանգուցեալ Մեսրոպ Արքեպ.ին ժառանգութիւնը, վասն զի Մեսրոպ Արքեպ. պէտք էր որ շատ դրամ թողած ըլլայ, սակայն կարելի չէ եղած հետքը գտնել, իսկ յուղարկաւորութիւնը կատարուեր է S. Prassede եկեղեցին»: Բնականապէս փութացի յիշեալ եկեղեցին, որ S. Maria Maggiore եկեղեցւոյն մօտ կը գտնուի, վախճանելոց գրքի մասին հարցմանս պատասխանեցին, որ 1824էն ի վեր ժողովրդապետութիւնը բարձուած է եկեղեցիէն եկեղեցական արձանագրութիւններ փոխադրուած են քահանայապետական ֆոխանորդութեան Դիւանը: Կրնանք ուրեմն մահուան թուականը դնել ապահովապէս 1779—1780ին:

Կայ Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցին հետեւեալ արձանագրութիւնը՝

ՅԻՇԱՏԱԿ Է ՏԱՊԵՆՍ

ԻՍԷՅՏԻԷՆՅ ՔԵԼՀԵԱՅ ԱՐԱՊԵԱՆ

ՄԵՍՐՕՊ ԱՐՔ ԵՊՍԻ

ԼԱՄԲԲՕՆԻ ԵՒ ԹԱՐՍԻՍԵԱՆԷՆ